ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՇԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ

Բնապահպան լինելը կոչում և կենսակերպ է. ԶՊՄԿ-ում ամենօրյա գործառույթներ է իրականացնում 43 բնապահպանից կազմված մասնագիտական թիմը...

06

Շարունակում ենք աջակցել տեղահանված արցախցիներին. ընտանիքները լիովին ապահովված են անհրաժեշտ կենցաղային տեխնիկայով...

08

Հանքարդյունաբերությունն աշխարհում. պատմում ենք ոլորտի առաջատար երկրների մասին...

18

ԸՆԴԵՐՔԻՑ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՑ
Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Լեռնագործների 18
press@zcmc.am

№45 • 2024թ.

Հանքագործի և մետալուրգի մասնագիտական օրը KOMATSU աշխարհահռչակ ընկերությունը շնորհավորեց յուրօրինակ տոնական ցուցադրությամբ

ԱՔԱՆԱՎՈՐԻՐ ՁՐ ԿՈԴԸ՝ ԻՄԱՑԻՐ ԱՎԵԼԻՆ:

Վստահ եմ, որ մեր թիմը կարող է հաղթահարել ամենահավակնոտ նպատակները

«ԶՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլիի ուղերձը հանքագործների և մետալուրգների մասնագիտական տոնի կապակցությամբ

Ցանկանում եմ շնորհավորել ԶՊՄԿ թիմին, մեր ողջ կոլեկտիվին: Սա տոն է բոլորի համար՝ ղեկավարությունից մինչև շարքային աշխատակից, վարչական աշխատողներից մինչև մեր դուստր ձեռնարկությունների աշխատակիցները: Մենք բոլորս անում ենք մի գործ՝ օգնում ենք առաջընթացին, երկարացնելու այս լեգենդար ձեռնարկության պատմությունը և հասնելու նոր նպատակների: Ձեր աշխատանքի յուրաքանչյուր օրը ներդրում է ձեռնարկության զարգացման գործում: Տարվա ընթացքում շատ բան ենք արել մեր հավակնոտ նպատակներին հասնելու համար: Մենք նպատակաուղղված առաջ ենք շարժվում՝ պատրաստվելով արտադրողականության ընդլայնմանը: Սա այնպիսի հավակնոտ նպատակներից է, որը մեզնից կպահանջի ավելի շատ աշխատանք և ջանք: ԶՊՄԿ-ի ներուժը հսկայական է, այն պետք է օգտագործվի ի շահ ձեռնարկության և ի շահ երկրի տնտեսության զարգացման, և մեր խնդիրն ու պարտավորությունն է դա անել ճշգրիտ, պատասխանատու և հնարավորինս արդյունավետ: Մեր ռազմավարությունը ժամանակակից, նորարարական, բարձր արդյունավետությամբ ձեռնարկություն դառնալն է, սա համաշխարհային նշանակության ընկերություն դառնալու ճանապարհն է:

Մենք արդիականացնում ենք առկա արտադրությունը, ստեղծում ենք նոր հզորություններ, որոնք թույլ կտան ժամանակակից տեխնոլոգիաների շնորհիվ հասնել արտադրողականության նոր մակարդակի: Անցյալ տարվանից մենք սկսել ենք ընկերության ավտոմատացման և թվային փոխակերպման գործընթացը: Ընկերության թվայինի փոխակերպումը նշանակում է բոլոր արտադրական գործընթացների որակապես նոր կառավարում, թափանցիկության և վերահսկողության ժամանակակից մակարդակ: Տարվա ընթացքում գործարկվեց մեր Ուսումնական կենտրոնը և մեկնարկեցին բազմաթիվ վերապատրաստման ծրագրեր՝ աշխատակիցների և երիտասարդ կադրերի համար: Սա ևս մեկ հավակնոտ նպատակ է՝ ներդրումներ կատարել կադրերի զարգացման, գիտելիքի և առաջընթացի մեջ: Մենք ցանկանում ենք, որ ԶՊՄԿ-ն մեր թիմի համար լինի ոչ միայն աշխատանքի վայր, այլ անընդհատ սովորելու, զարգանալու և մասնագիտական նոր բարձունքներ նվաճելու հնարավորություն: Այս տարի հսկայական ջանքեր են գործադրվել տեխնիկական անվտանգության, աշխատակիցների առողջության և անվտանգության, ինչպես նաև շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված գործընթացների արդիականացման ուղղությամբ: Սա անգիջում ճանապարհ է՝ փոխելով սովորությունները, մարտահրավեր նետելով այն կաղապարներին և իներցիային, որոնք խոչընդոտում են արտադրության և մարդկանց անվտանգությանը:

Մենք միասին արդեն շատ բան ենք արել, և դեռ շատ բան կա անելու: Սա հեշտ տարի չէր, և ձեռքբերումների ճանապարհը ենթադրում է արտասովոր խնդիրների լուծում: Ես վստահ եմ, որ մեր թիմը կարող է հաղթահարել ամենահավակնոտ նպատակները: Շնորհավոր ձեր տոնը:

Մենք ցանկանում ենք, որ ԶՊՄԿ-ն մեր թիմի համար լինի ոչ միայն աշխատանքի վայր, այլ անընդհատ սովորելու, զարգանալու և մասնագիտական նոր բարձունքներ նվաճելու հնարավորություն:

Հասնում ենք ժամանակակից պահանջներին համապատասխան հանքարդյունաբերությանը. ՍԱՐԳԻՍ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ԶՊՄԿ-ում կայացել է Հայաստանում պղնձի արդյունահանման արդի վիճակի և մաքուր պղնձի ստացման հիմնախնդիրների վերաբերյալ աշխատաժողով, որի մասնակիցները շրջայց են կատարել հանքավայրում, և կիսվել տպավորություններով:



ՀՀ ԳԱԱ Երկրաբանության ինստիտուտի տնօրենի խորհրդական **Սարգիս Շահազիզյան.** *«Հանքավայրում եղել եմ դեռևս ուսանող ժամանակ՝ 1970թ., այնուհետև 1997-1998թթ.՝ բնապահպանության նախարար լինելու տարիներին, նաև 2015թ. էի եղել այստեղ: Պետք է նշեմ, որ սարեր-ձորերի տարբերություն կա: Այն ժամանակ հանքում պայթեցումներն այնպիսի ձևով էին արվում, որ ժամերով փոշին չէր նստում: Շրջակա միջավայրի հարցերը լրիվ անտեսված էին, բայց հիմա լրիվ փոխվել է իրավիճակը: Հիմա քայլում ենք ժամանակին համահունչ և հասնում ենք ժամանակակից պահանջներին համապատասխան հանքարդյունաբերությանը»:* ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ Գրիգոր Հայրապետյան. *«Մեր արտահանման գրեթե 30-33 տոկոսը բաժին է ընկնում հանքարդյունաբերությանը: Եթե դիտարկենք կոնկրետ պղինձը և մոլիբդենը, ապա 2022թ. տվյալներով դա մոտ մեկ միլիարդ դոլար է կազմում, ինչն արտարժույթի շատ մեծ աղբյուր է հանդիսանում Հայաստանի Հանրապետության համար: Իսկ այդ արտարժույթը հետագայում հիմք է հանդիսանում այն ապրանքների ներմուծման համար, որոնք տվյալ դեպքում տնտեսությունը, մյուս ընկերությունները կարիք ունեն ներմուծել տեխնոլոգիաներ և այլ սարքավորումներ»,–* շեշտել է նա: Տնտեսագետի դիտարկմամբ՝ Հայաստանի տնտեսության մեջ բավականին բարձր է աղքատության ցուցանիշը և տարբեր գնահատականներով այն կազմում է միջինը 27 տոկոս, իսկ ամենացածր ցուցանիշը Սյունիքի մարզում է: *«Եթե մենք կարողանում ենք մարզերում զբաղվածություն ապահովել, ապա առնվազն մարզի բնակչությունը երկարաժամկետ կտրվածքով կապվում է իր ծննդավայրի հետ: Եվ երկարաժամկետ հատվածում հանքարդյունաբերության զարգացումը նույն Սյունիքի մարզում կարող է հիմք հանդիսանալ արդյունաբերական կլաստերների ստեղծմանը, որոնց մեջ կարող է առաջատար լինել հենց հանքարդյունաբերական ոլորտը»,–* եզրափակել է **Գրիգոր Հայրապետյանը**:



ԹՈՓ 10 ապրանքախմբերը Հայաստանի արտահանման կազմում - 2022թ., *ծավալը՝ մլն ԱՄՆ դոլար*

Երկօրյա աշխատաժողով ԶՊՄԿ-ում

ԶՊՄԿ-ում կայացած Հայաստանում պղնձի արդյունահանման արդի վիճակի և մաքուր պղնձի ստացման հիմնախնդիրների վերաբերյալ երկօրյա աշխատաժողովի արդյունքներով ձեռք են բերվել համագործակցության պայմանավորվածություններ:

«*Աշխատաժողովի թեման չափազանց կարևոր և արդիական է: Եվ եթե մենք սահմանել ենք նշաձող՝ ունենալ ամենաբարձր ցուցանիշներով ընկերություն՝ թե տեխնոլոգիական, թե բնապահպանական, թե կառավարման և թե կորպորատիվ պատասխանատվության առումներով, ուրեմն հիմա մենք ճիշտ վայրում ենք՝ ոլորտին իսկապես տիրապետող մարդկանց հետ: Այստեղ այն մարդիկ են, որոնց հետ կարևոր է աշխատել և քննարկումներ ունենալ: Սրանք պարզապես խոսքեր չեն: Դա մեր սկզբունքն է, մեր հայեցակարգը»,*– իր ողջույնի խոսքում նշել է ԶՊՄԿ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին:

Մասնակիցների թվում էին ԵՊՀ-ի, Հայաստանի Պոլիտեխնիկական ինստիտուտի և Գիտությունների ակադեմիայի մասնագիտական ինստիտուտների պրոֆեսորներ և ոլորտի գիտնականներ:

Մասնագիտական քննարկումների հետ մեկտեղ ոլորտի գիտնականներն իրենց հարցազրույցներում խոսել են Հայաստանում հանքարդյունաբերության վերաբերյալ տասնամյակներ շարունակ տարածվող թյուր տեղեկատվության պատճառած վնասների մասին, ինչպես նաև անդրադարձել տարիներ շարունակ իրենց որպես «բնապահպան» դիրքավորող անձանց, ովքեր ոլորտի մասին մասնագիտական պատկերացում չունեն:

Տիգրանուհի Բաղալյան

Բնապահպան լինելը կոչում և կենսակերպ է

Բնապահպանությունը հանքարդյունաբերության ոլորտի կարևորագույն օղակներից է, որի գերնպատակն է՝ կանխել ու նվազեցնել շրջակա միջավայրին հասցվող հնարավոր վնասները: ԶՊՄԿ-ում այս հարցում ամենօրյա գործառույթներ է իրականացնում 43 բնապահպաններից կազմված մասնագիտական թիմը:

ԱՐԾՎԻՆ ԾԱՏՐՅԱՆ
Բնապահպանության բաժնի պետի տեղակալ

ԲԱԳՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Բնապահպանության բաժնի նմուշարկող

ԱՍԱՏՈՒՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Բնապահպանության բաժնի մշտադիտարկումների համակարգող

Բնապահպան լինելը ոչ թե մասնագիտություն, այլ կոչում է, ոմանց համար էլ՝ կենսակերպ: Այս կարծիքին են ԶՊՄԿ-ի բնապահպանության բաժնի մասնագետները: Հունիսի 5-ը Հայաստանում նշվեց որպես բնապահպանի օր:

«Ոլորտն ունի ուրույն հատկանիշներ. ավելի շատ պետք է կենսակերպ լինի, որ մարդը կարողանա այս աշխատանքով զբաղվել, ինչպես նաև սիրի բնությունը, կարողանա բնության հետ ներդաշնակ լինել, որ հետագայում առաջացած խնդիրները կարողանա պատասխանատու կերպով լուծել»,– նշում է «ԶՊՄԿ» ՓԲԸ բնապահպանության բաժնի պետի տեղակալ Արծվին Ծատրյանը :

Ձեռնարկության անծայրածիր տարածքում սկսած արտադրական հատվածից՝ ամենօրյա մշտադիտարկումներ են իրականացվում: Ջրի պաշարների, որակի, օդի վիճակի, հողի պարունակության տվյալները արտադրության մեջ օդ ու ջրի պես անհրաժեշտ են:

Բագրատ Բաղդասարյանը «ԶՊՄԿ» ՓԲԸ բնապահպանության բաժնում որպես նմուշարկող նոր է սկսել աշխատել: Ասում է՝ դեռ սովորելու բան շատ ունի: Նա համոզված է, որ, անկախ զբաղեցրած պաշտոնից ու գտնվելու վայրից, յուրաքանչյուրը պետք է բնապահպան լինի:

«Նմուշառման տվյալները պետք են արտադրության համար, քանի որ առանց ջրի հնարավոր չէ արտադրություն իրականացնել: Պետք է նախապես իմանանք ջրի քանակը ցանկացած հատվածում»,– ասում է Բագրատ Բաղդասարյանը:

Ձեռնարկության բնապահպանության բաժինը համալրված է անհրաժեշտ սարքավորումներով: Մոտ երկու ամիս է արդեն՝ ձեռք է բերվել հանքարդյունաբերության մեջ խիստ անհրաժեշտ նորագույն մետիոսարքավորում: Այն հեշտ ու արագ տեղեկատվությունը տեղ է հասցնում:

Կոմբինատի 43 բնապահպաններից կազմված մասնագիտական թիմի կազմում է նաև մշտադիտարկումների համակարգող Ասատուր Առաքելյանը: *«Նոր սարքը բավականին զգայուն է: Քամու արագություն, ուղղություն, օդի հարաբերական խոնավություն, ձյան շերտի հաստություն. այս բոլոր տվյալները նոր սարքը հեշտությամբ ու ճշգրիտ է արձանագրում»,*– գնահատում է մասնագետը:

Իրականացվող բնապահպանական միջոցառումների շարքը տարեցտարի ընդլայնվում է. սկսած Արծվանիկի պոչամբարի ռեկուլտիվացումից, ծառատունկներից, կանաչապատումից՝ մինչև ազդակիր Կապանի ու Քաջարանի հետ համագործակցություն:

«Համագործակցում ենք գրեթե բոլոր պետական կառույցների հետ՝ ՀՀ կառավարություն, Շրջակա միջավայրի նախարարություն, Ջրային կոմիտե, տեղի ու միջազգային կառույցների հետ, որոնք նույնպես ստուգում են մեր աշխատանքը և տալիս իրենց գնահատականը: Վերջին հինգ տարվա ընթացքում ռեկուլտիվացման շրջանակում Արծվանիկ պոչամբարի տարածքում տնկվել է մոտ 15-17 հազար ծառ»:

«ԶՊՄԿ» ՓԲԸ բնապահպանության բաժնի պետի տեղակալ Արծվին Ծատրյանը հատկապես առանձնացնում է նախորդ տարի իրականացված Ողջի գետի հունի մաքրման բնապահպանական խոշոր ծրագիրը, որը անչափ կարևոր էր քաղաքի համար: Կարևորությամբ չի զիջում նաև ներկայումս ընթացող անտառվերականգնողական աշխատանքները Կապանի տարածքում: *«Այս պահին հողային աշխատանքներ ենք իրականացնում Կապանի՝ դեպի շուկա տանող դեղին հողի տարածքում: Նախատեսում ենք այդ հատվածում նաև ծառեր տնկել»,* – ասում է Արծվին Ծատրյանը:

Բնապահպանները նաև հիշեցնում են բոլորին՝ շրջակա միջավայրը պահպանելու և գնահատելու համար, բնությունը սիրելու ու խնայելու համար ամենևին պարտադիր չէ բնապահպան աշխատել և մասնագետ լինել, այլ անհրաժեշտ է բնապահպան լինել կենսակերպով՝ մշտապես և ամենուր:

Հերմինե Միքայելյան

Ուսանողներին հետաքրքրում է հանքավայրը, իսկ մենք սիրով հյուրընկալում ենք

Այս անգամ ՀՊՄԿ հյուր էին եկել Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի «հասարակության հետ կապեր» ֆակուլտետի երրորդ կուրսի ուսանողները:

Փաստորեն, հանքարդյունաբերությունը հետաքրքիր է երիտասարդներին, և ոչ միայն՝ ոլորտի հետ առնչվող ապագա մասնագետներին: Ուսանողների համար հայտնություն էր հանքավայրը, երբեք չէին տեսել ու, բնական է, որ հարցերի տարափ էր՝ անծանոթ այս ոլորտն ըմբռնելու համար:

Ուսանողները շրջայց կատարեցին ընկերության տարածքում, ծանոթացան արտադրական գործընթացին. եղան բացահանքում և հարստացուցիչ ֆաբրիկայում: Մեր ընկերությունը պատրաստակամորեն արձագանքում է այցելուների առաջարկներին, ովքեր իսկապես հետաքրքրված են հանքարդյունաբերությամբ:

Երկար դադարից հետո կրկին լույս է տեսել «Հանքագործ և մետալուրգ» հանդեսը

Գրեթե տասը տարվա դադարից հետո լույս տեսավ «Հանքագործ և մետալուրգ» հանդեսը: Համոզված ենք, որ ձեզ կհետաքրքրեն ոլորտի ներկայի ու ապագայի նկատմամբ Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության նախագահ Վարդան Ջհանյանի, ՏԿԵՆ փոխնախարար Հովհաննես Հարությունյանի, ինչպես նաև գիտության ու կրթության ոլորտի ճանաչված մասնագետների տեսակետներն ու գնահատականները:

Հանդեսի պատմությունը, նպատակներն ու վերահրատարկման անհրաժեշտությունը

Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության «Հանքագործ և մետալուրգ» եռամսյա հանդեսը տպագրվել է 2008-2016թթ. և մեծ դերակատարում է ունեցել ինչպես Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության ճանաչելիության բարձրացման, այնպես էլ ձեռնարկությունների խնդիրների և հաջողությունների, երկրի տնտեսական կյանքում ոլորտի, նրա մարդկանց աշխատանքի կարևորության բարձրաձայնման, փոխճանաչման հարցում: Թողարկված 30 համարները ներկայացրել են հանքարդյունաբերության այդ տարիների ոլորտի վավերագրությունը՝ ինչպես ռեպորտաժների, լրագրողական տարբեր նյութերի, այնպես էլ գիտական հոդվածների միջոցով:

Մեդիա դաշտում էլեկտրոնային լրատվամիջոցները լուծում են օպերատիվ լրատվության խնդիրը և միությունն այս առումով ապահովված է: Սակայն գործող 300-ից ավել լրատվական կայքերի մեջ, միշտ չէ որ մենք կարող ենք գտնել մեր թիրախային լսարանը և տեղ հասցնել ասելիքը:

Իսկ բարձրորակ և ճաշակով ձևավորմամբ, գունավոր տպագրությամբ պարբերականը դրվում է կոնկրետ հասցեատիրոջ աշխատասեղանին, օրվա կոնկրետ թեմաների, խնդիրների վերհանմամբ, ուստի անվիճելի է արդյունավետությունը:

Մեզ շատերն են հարցնում, թե ինչո՞ւ լույս չի տեսնում «Հանքագործ և մետալուրգը»: Եվ այդ հարցը միայն մասնագիտական հարթակում չէ, որ հնչում է: Բազմաթիվ գիտնականներ, արտադրության ճանաչված մասնագետներ, շարքային աշխատողներ, ովքեր ծանոթ էին հանդեսին, այն կարծիքին են, որ ոլորտը պետք է ունենա իր տպագիր լրատվամիջոցը, որը, բացի այսրոպեական խնդիրների վերհանումից, նաև կարխիվացնի իր ժամանակի հանքարդյունաբերությունն ու նրա մարդկանց առտնին հոգսերը, տեսակետները, մոտեցումներն այս կամ այն երևույթի նկատմամբ, ինչը, համոզված ենք, հետագայի համար կհանդիսանա տեղեկատվության լավագույն աղբյուր: Ի դեպ, այն պահվում է նաև ՀՀ Ազգային գրադարանում և գրապահոցում:



Մեր նպատակն է ազնվորեն ծառայեցնել այդ գործիքն ի շահ լավի, առաջավորի հանրայնացմանը, ոլորտի խնդիրներն ու ծրագրերը լուսաբանելուն, բազմակարծության ապահովմանը, մեր երկրի տնտեսության ողնաշարն ամուր պահող հանքագործների և մետալուրգների նվիրումը գնահատելուն:

Շնորհավո՛ր Հանքագործի և մետալուրգի օրը

Արդեն շուրջ քսան տարի աշխատելով Հայաստանի հանքագործների և մետալուրգների միությունում նախ որպես հանդեսի հիմնադիր-խմբագիր, իսկ 2012 թվականից որպես տնօրեն, ամեն օր շփվել եմ ոլորտի մարդկանց՝ գիտնականների, դասախոսների, երկրաբանների, լեռնային ինժեներների, տնտեսության բազմափորձ ղեկավարների և, իհարկե, հորատողների, հարստացնողների, պայթեցնողների, ձուլագործների և շատ ու շատ մասնագիտությունների մարդկանց հետ, տեսել եմ նրանց առօրյա ծանր աշխատանքը, նվիրումը: Իմ տեսածն ու զգացածը շատ դեպքերում վերածվել է լրագրողական նյութերի, որոնց հերոսներին (ցավոք, նրանցից շատերն այլևս մեզ հետ չեն) այսօր հուզմունքով եմ վերհիշում: Եվ անկեղծորեն ուրախ եմ, որ զրուցել եմ ոլորտի երախտավորներ Ֆրունզե Պետրոսյանի, Սաբիր Ստեփանյանի, Պետրոս Ալոյանի, Մաքսիմ Հակոբյանի, Բորիկ Մկրտչյանի ու էլի շատ-շատերի և նրանց գործը երախտագիտորեն շարունակող ներկա սերնդի ղեկավարների ու մասնագետների, արտադրության առաջավորների հետ: Նրանք, իրոք, անմահացել են իրենց գործով և դա վավերացվել-հանրայնացվել է «Հանքագործ և մետալուրգ» հանդեսում:

Ի սրտե շնորհավորում եմ բոլոր նրանց մասնագիտական տոնը, ովքեր իրենց զգում են որպես հանքարդյունաբերության և մետալուրգիայի ոլորտի մի մասնիկը. մաղթում եմ քաջառողջություն և մասնագիտական նոր հաջողություններ:

Վոլոդյա Կիրակոսյան
Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության տնօրեն
«Հանքագործ և մետալուրգ» հանդեսի հատուկ թողարկման պատասխանատու խմբագիր

ԶՊՄԿ-ն շարունակում է աջակցել տեղահանված արցախցիներին

Ինչպես և խոստացել էր՝ ԶՊՄԿ-ն, անցած ինն ամիսների ընթացքում Արցախից բռնի տեղահանվածների կողքին է: Քաջարանի Գեղի, Բարիկավան, Նոր Աստղաբերդ, Քաջարանց, Լեռնաձոր գյուղական բնակավայրերում հաստատված բոլոր արցախցիներն այժմ արդեն լիովին ապահովված են անհրաժեշտ տեխնիկայով և գույքով:

Խոշորացված Քաջարանի գյուղական բնակավայրերում հաստատված արցախցիները ամբողջովին ապահովված են թե՛ անհրաժեշտ գույքով, և թե՛ տեխնիկայով: Սառնարան, հեռուստացույց, լվացքի մեքենա, գազօջախ, ջրատաքացուցիչ, էլեկտրական վառարան, ջեռոց. սրանք են այն հիմնական խիստ անհրաժեշտ իրերը, առանց որոնց դժվար է պատկերացնել կենցաղը:

Տիկին Արաքսյան բեռնատարը նկատելուն պես Գեղիի գյուղապետարան է շտապել: Ասում է՝ կահույքն էլ որ ստանա, Կապանում տեղավորված երեխաները իր մոտ կտեղափոխվեն, ընտանիքը կմիավորվի: Ինն ամիսը և՛ գյուղին, և՛ միջավայրին հարմարվելու համար բավարար ժամանակ է: *«Հայաթ ենք արե, բաղչա եմ անում, թոշակ եմ առնում, օգնություններն էլ ստանում ենք, հանգիստ խղճով ու նորմալ ապրում ենք»,*– ասում է հերթական աջակցության հետևից եկած՝ Արցախից տեղահանված

Արաքսյա Մարտիրոսյանը: *«Կառավարը ստացածըմ, խոլոդիլնիկը ստացածըմ, տելեվիզոր եմ ստանում, մի խոսքով՝ շնորհակալ եմ»,–* այսպես հակիրճ պատասխանեց տեղահանված Ալեքսեյ Մկրտումյանը: Գեղի բնակավայրում արդեն ինն ամիս հաստատված Հակոբյանների բազմաշունչ ընտանիքին էլ հասավ լայնէկրան հեռուստացույցը: Վեց երեխաների մոր համար դպրոցական

Քաջարանի համայնքապետարանի ԿՄՍԱ և սոցիալական ծրագրերի բաժնի պետ Գայանե Համազասպյանի խոսքով՝ «Փարոս» ընկերությունն ու ամերիկյան բարերարները երեք բնակարան են նորոգել ու հանձնել տեղահանվածներին: Իսկ Գեղի համայնքում նրանք նախատեսում են տասը ընտանիքի համար տներ կառուցել:

արձակուրդի լավագույն նվերն է՝ երեխաները զբաղմունք գտան: «ԶՊՄԿ» ՓԲԸ-ն անցած ինն ամիսներին, ինչպես և խոստացել էր, գույքով ու էլեկտրատեխնիկայով ապահովել և ապահովում է Արցախից բռնի տեղահանվածներին՝ համագործակցելով համայնքապետարանների հետ: *«Նախորդ տարվա սեպտեմբերից սկսած՝ կարիքների գնահատում ենք իրականացնում՝ այցելելով տեղահանվածների տներ: Աստիճանաբար սկսում ենք աջակցել: Այս փուլով խոշորացված Քաջարանում՝ շրջակա գյուղերով, բնակություն հաստատած տեղահանվածների կարիքներն ամբողջությամբ բավարարված են: Կարելի է ասել՝ որևէ ընտանիք առաջին անհրաժեշտության գույքի և տեխնիկայի խնդիր չունի: Իսկ հաջորդ փուլով աջակցություն կտրամադրենք նաև Կապանի և Մեղրու տարածաշրջաններում հաստատված տեղահանված ընտանիքներին»,* – մեզ հետ զրույցում ասաց «ԶՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի խորհրդական Ռուդոլֆ Սարգսյանը:

60 ընտանիք է հաստատվել Քաջարանում, այդ թվում՝ գյուղական բնակավայրերում՝ 190 տեղահանված: Բացի ԶՊՄԿ–ից և համայնքապետարանից՝ նրանք նաև աջակցություն են ստանում միջազգային կառույցներից: Քաջարանի համայնքապետարանի ԿՄՍԱ և սոցիալական ծրագրերի բաժնի պետ Գայանե Համազասպյանի խոսքով՝ «Փարոս» ընկերությունն ու ամերիկյան բարերարները երեք բնակարան են նորոգել ու հանձնել տեղահանվածներին: Իսկ Գեղի համայնքում նրանք նախատեսում են տասը ընտանիքի համար տներ կառուցել:

Հերմինե Միքայելյան

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՄԼԵՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ
Բացահանք, մեխանիկական կառավարչության փականագործ

ԱՐԱ ՌԻԿՈՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Բացահանք, հետախուզման և հորատման տեղամաս, հորատման հաստոցի օպերատոր

ԱՐԹՈՒՐ ՀՐԱՆՏԻ ԲԱԴԱԼՅԱՆ
Հանքաքարի ջարդման և տեղափոխման արտադրամաս, առաջատար ինժեներ

ԱՐՄԱՆ ԱՐՄԵՆԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ
Գլխավոր հարստացուցիչի բաժնի գլխավոր տեխնոլոգ

Հանքագործի և մետալուրգի մասնագիտական տոնի կապակցությամբ, հուլիսի 19-ին ընկերության 22 աշխատակից պարգևատրվել է բարեխիղճ աշխատանքի համար

ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ

ԱՐՄԵՆ ԵՐՎԱՆԴԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Հարստացուցիչ ֆաբրիկա, 5-րդ տարակարգի ֆլոտացնող

ԲՈՐԻԿ ՍՄԲԱՏԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Բացահանք, պայթեցման տեղամասի պայթեցնող

ԴԱՎԻԹ ՅՈՒՐԻԿԻ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ
Արտադրության սպասարկման դեպարտամենտ, էներգաարտադրամասի էլ. փաթաթող

ԷԴԳԱՐ ԼԵՎՈՆԻ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ
Ճանապարհային տեղամաս, ավտոգրեյդերի օպերատոր

ԷԴԳԱՐ ՍԱՄՎԵԼԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Պոչամբարային տնտեսության պոչատար վաքերի և թունելների տեղամասի պետ

ԷԴԻԿ ՇՈՒՐԱՅԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀԾԲ, ԲԵԼԱԶ 548 մակնիշի ինքնաթափի վարորդ

ԷՐԻԿ ԿԱՌԼԵՆԻ ԱՎԱԳՅԱՆ
Հարստացուցիչ ֆաբրիկայի մեխանիկական կառավարչության ղեկավար

ԿԱՐԵՆ ՁՈՆԻԿԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ
Տեխնոլոգիական ավտոհավաքակայան, ավտովարորդ

ԿԱՐԵՆ ՊԱՎԼՈՒՇԱՅԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Տրանսպորտային դեպարտամենտ, ավտոտնտեսության վերանորոգման արտադրամասի ավագ մեխանիկ

ՀԱՅԿ ՅՈՒՐԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Ֆինանսական տնօրինություն, նյութերի հաշվառման բյուրոյի վարիչ

ՀՐԱՆՏ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԻՐԶՈՅԱՆ
Հարստացուցիչ ֆաբրիկա, աղացի մեքենավար, 5-րդ տարակարգ

ՄԻՀՐԱՆ ՀԱՄԼԵՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Կայուն զարգացման դեպարտամենտ, տնկարանային տնտեսության համակարգող

ՄԽԻԹԱՐ ՄԵՐՈՒԺԱՆԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ
Հանքաքարի ջարդման և տեղափոխման արտադրամաս, փականագործ

ՄՀԵՐ ԼԵՌՆԻԿԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Արտադրական էսթետիկա, բանվոր

ՆԱԶԻԿ ԱԼՅՈՇԱՅԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ
Մետալուրգիական լաբորատորիա, ֆլոտացնող

ՄԵՎԱԿ ՄԱՄԻԿՈՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ
Փոխադրամիջոցների վերանորոգման արտադրամաս, փականագործ

ՎԱՐՈՒԺԱՆ ԲՈՐԻԿԻ ԴԱՎԹՅԱՆ
Բացահանքի բարձման տեղամասի ճոպանային էքսկավատորի օպերատոր

ՏԻԳՐԱՆ ՆՇԱՆԻ ՆԵՐՍԵՍՅԱՆ
Անվտանգության դեպարտամենտի «Քաջարան» ռեժիմի, պահպանության ծառայության պետի տեղակալ

Բեռնակիր ձիերից մինչև հզորագույն բեռնափոխադրող տեխնիկա. Վիլյուշա Խաչատրյանի աչքի առջև անցել է հանքի զարգացման մի հսկա շրջափուլ

Ձեզ ենք ներկայացնում սպասված զրույց՝ «ՀՊՄԿ» ՓԲԸ երախտավոր, անվանի ավտովարորդ, ԽՍՀՄ գերագույն խորհրդի դեպուտատ, աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր, Քաջարանի պատվավոր քաղաքացի Վիլյուշա Խաչատրյանի հետ: Այցելեցինք անվանի լեռնագործին, մեզ հետաքրքիր էին նրա հիշողությունները կապված և՝ կոմբինատի, և՝ քաղաքի հետ:

Բարձր տրամադրություն ուներ, սենյակի մի անկյունում նախապատրաստել էր վաստակած շքանշաններն ու մեդալները, պատվոգրերն ու լրագրային, արդեն խունացած հոդվածները, հին լուսանկարները: Անմիջապես մտերմիկ զրույց ծավալվեց:

– Վաղ տարիքից աշխատել եք կոմբինատում. երկար տարիներ, գրեթե 6 տասնամյակ: Ինչ հիշարժան պահեր կան, որոնցով կցանկանայիք կիսվել:

– Ինձ դժվարությամբ ընդունեցին աշխատանքի. այն պատճառով, որ տարիքս չէր համապատասխանում, (16 տարեկան էի) չնայած, անձնագիր արդեն ստացել էի, ինչը դրդում էր ինձ հասուն զգալ (ժպտում է): Իսկ մերժում էի ստանում այն պատճառով, որ սահմանված 8-ժամյա աշխատանքի համար տարիքս իրոք, չէր բավարարում: Սակայն ես համառում էի և ի վերջո, 1956 թվականի ամռանը ընդունվեցի ՀՊՄԿ-ի լեռնային արտադրամաս, որը «Ռուդնիկ» էր կոչվում:

– Իսկ ինչպիսին էր՝ ընտանիքի անդամների արձագանքը:

– Հայրս հիվանդ էր, մայրս՝ տարիքն առած, եղբայրս բանակում, քույրս՝ ամուսնացած: Ընտանիքիս ֆինանսական հնարավորությունները սուղ էին: Ոգևորված էի, պատրաստակամ ու եռանդուն: Առաջին իսկ օրը ցույց տվեցին կատարվելիք աշխատանքի ծավալը, պահեստում բեռնակիր էի՝ նյութեր էի տեղափոխում հանքի կազմում գտնվող 36-րդ վարչություն:

Աշխատակիցների մեջ կային նաև ազատ կալանավորներ, որոնք հարկ եղածի պես չէին աշխատում, արդյունքում՝ պահեստում աննկարագրելի խառնաշփոթ էր, որի կարգավորմանը ձեռնամուխ եղա անմիջապես:

Ոչ մեքենա կար, ոչ տեխնիկա, «Զիլ» մակնիշի մեկ ավտոմեքենա ունեինք, որով բանվորներին հանք էին տեղափոխում: Ապրանքների տեղափոխումը հիմնականում ձիերով էր իրականացվում:

– Իսկ այն ժամանակ, ինչպես էր կոմբինատը հոգում աշխատակիցների սնունդը:

– Առավոտյան նախաճաշ էին տալիս, երբեմն նաև՝ խաշ: Համեղ, անգամ թույլատրվում էր մեկ բաժակ օղի օգտագործել: Ծատ լավ սպասարկում էր իրականացվում:

– Ինչպես և երբ դարձաք ավտովարորդ:

– Որպես բանվոր հաջողությամբ անցա փորձաշրջանը, պահեստում շատ բան կարգավորեցի ու դրանով աչքի ընկա: Ու դա եղավ իմ առաջին, կարևոր ձեռքբերումը: Հետո՝ այն տարիներին դեռևս գործող ստորգետնյա հանքում որպես պայթեցնողի օգնական էի աշխատում: Մեր օրերում դժվար կլինի պատկերացնել, որ պայթեցնողը հանք էր գնում՝ մեջքին 1 կամ 2 կգ պայթուցիկ, հետևից էլ՝ օգնականը: Հանքավայրի ստորգետնյա շահագործումը տևել է մինչև 1957 թվականը:

Դրանից հետո անցան բաց եղանակով մշակմանը: Ինձ էլ գործուղեցին հանքավայր՝ խորփորման հաստոցավարների բրիգադ: Այդտեղ էլ երկար չաշխատեցի:

Տրակտորիստների ուսուցման դպրոց էր բացվել: Մեխանիզմի կառավարման հմտություններն էին սովորեցնում, որն ավարտեցի գերազանց գնահատականներով:

Զորակոչվեցի խորհրդային բանակ և զորացրվելուց հետո անմիջապես վերադարձա կոմբինատ:

Կոմբինատի դիրեկտորն էր՝ Ֆրունզե Պետրոսյանը: Ծառայությանս ընթացքում մեծ փոփոխություններ էին իրականացվել ձեռնարկությունում. ավտոպարկը համալրվել էր այն ժամանակների հզորագույն տեխնիկայով: КРАЗ, БеЛаз մակնիշի ավտոինքնաթափեր եմ վարել՝ 27, 40 և այլ բեռնատարողությամբ: Իմ աշխատանքային վերջին տասնամյակում արդեն 110 տոննա բեռնատարողությամբ БеЛаз մակնիշի ավտոինքնաթափի վարորդ էի:

Աշակերտել եմ անվանի ավտովարորդ Արշավիրին, ով գերազանց տիրապետում էր տեխնիկան վարելու բոլոր հմտություններին, և համատեղ ջանքերով՝ աշխատանքային դժվարությունները հաղթահարվում էին:

– Պրն Խաչատրյան, իսկ հետաքրքիր է, ինչ ազգությունների ներկայացուցիչներ էին աշխատում կոմբինատում Խորհրդային Միության տարիներին:

– Կոմբինատի կոլեկտիվը բազմազգ էր. հիմնականում հայեր, ռուսներ, ուկրաինացիներ, բելառուսներ էին, նաև՝ վրացիներ, թաթարներ. միասնական պետության կազմում համերաշխաբար ապրում, աշխատում էինք կողք-կողքի:

– Նաև ակտիվ հասարակական գործունեություն եք ծավալել, կոմբինատից ընտրված ԽՍՀՄ գերագույն խորհրդի վերջին դեպուտատն էիք:

– Ճիշտ եք, ակտիվ հասարակական գործունեություն էի ծավալում: Կարևոր եմ համարում իմ դեպուտատական գործունեության կարճատև ժամանակահատվածը: Այն մեծ նշանակություն ուներ: Փաստորեն, մասնակցում էի վիթխարի երկրի կառավարմանը: Նաև եղել եմ կոմբինատի լեռնային արտադրամասի կուսակցական կազմակերպության քարտուղար, աշխատել կոմբինատի կուսակցական կոմիտեի քարտուղար Կամո Մովսիսյանի, ՀԿԿ Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար Կարեն Մկրտչյանի հետ: Խստապահանջ, բանիմաց մարդիկ էին, որոնցից շատ բան սովորեցի:Երբ զբաղվածությունդ մեծ է, ժամանակի ամեն պահն օգտագործում ես: Հաճախ էի ելույթներ ունենում տարբեր միջոցառումներում: Դրանց պատրաստվում էի, թերթերն ուսումնասիրում: Եղել եմ ՀԿԿ Ղափանի շրջկոմի պլենումի անդամ, ժողովրդական դեպուտատների Ղափանի շրջանային խորհրդի գործկոմի անդամ: Ակտիվորեն մասնակցել եմ հարբեցողության դեմ այդ տարիներին մոդայիկ դարձած պայքարին: Նույնիսկ առաջարկել եմ շրջանում կտրել թթենիները: Հետաքրքիր տարիներ էին...

– Իսկ վերջին անգամ երբ եք եղել կոմբինատի հանքավայրում:

– 58 տարի աշխատել եմ կոմբինատում, մինչև վերջ եղել եմ աշխատանիք մեջ: 2014 թվականին անցա վաստակած հանգստի: Հետո երկու այցելություն կատարեցի բացահանք. հետաքրքիր էր՝ ինչպես են աշխատում:

– Իսկ որն է ձեր ստացած ամենապատվավոր շքանշանը:

– Աշխատանքի կարմիր դրոշի շքանշանը, – ցույց է տալիս և ավելացնում – Հիշարժան է նաև 1984 թվականը, երբ ԽՍՀՄ գունավոր մետալուրգիայի մինիստր Պյոտր Լոմակոյի կողմից հրավիրվեցի Մոսկվա, լավ աշխատանքի համար արժանացա ԺՏՆՑ-ի (ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդես) դիպլոմի և պարգևատրվեցի Մոսկվիչ-412 մակնիշի ավտոմեքենայով,– ցուցադրում է բազմաթիվ հուշ-լուսանկարներ Մոսկվայից:

– Ձեր որդին, բացահանքի արդեն ճանաչված ավտովարորդ Խաչատուր Խաչատրյանը, նույնպես արժանի հեղինակություն և ճանաչում ունի ձեռնարկությունում: Որն է դրանում Ձեր դերը:

– Քաջարանը բազմաթիվ կադրեր է տվել կոբինատին: Տանը, թե դրսում, բոլորի թեման կոմբինատն էր և հիմա էլ՝ այդպես է: Տղաս մի քանի անգամ եկել էր ինձ մոտ աշխատավայր, նկատելի էր նրա հետաքրքրությունը տեխնիկայի նկատմամբ, ուստի չզարմացա, երբ ցանկություն հայտնեց շարունակել իմ մասնագիտությունը:

Այսպիսի հետաքրքիր ու ծավալուն զրույց ստացվեց կոմբինատի երկարամյա ավտովարորդ, Քաջարան քաղաքի պատվավոր քաղաքացի Վիլյուշա Խաչատրյանի հետ, ով կյանքի լավագույն տարիներն անցկացրել է կոմբինատում, դարձել ձեռնարկության նվիրյալն ու շատերի համար լավագույն աշխատանքի, մարդկային բարձր որակների ցանկալի օրինակ:

Լիլիթ Իսրայելյան
Քաջարան, 2024թ.

Ֆուտբոլային թեժ ամիսը, Հայաստանի և Սյունիքի ֆուտբոլային ապագան

ԵՎՐՈ-2024-ն անցավ պատմության գիրկը: Հայ ֆուտբոլասերները հետևում էին լարված և դիտարժան հանդիպումներին: Հուսանք մեծ մրցաշարերին մի օր կտեսնենք նաև մեր ազգային հավաքականը: Նման արդյունքի հասնելու համար կարևոր նշանակություն ունի մանկապատանեկան ֆուտբոլի զարգացումը:

ՀՊՄԿ-ն մշտապես մեծ աջակցություն է ցուցաբերել Սյունիքի մարզում ֆուտբոլի զարգացմանը:

2022 թվականին «Գանձասար-Կապան» ֆուտբոլային ակումբը վերանվանվեց «Սյունիք» և նոր ներդրումներով ու նոր նպատակներով սկսեց մասնակցել Հայաստանի 1-ին խմբի առաջնությանը: Ընկերությունն ամբողջությամբ ֆինանսավորում է «Սյունիք» ֆուտբոլային ակումբի գործունեությունը, որտեղ բացի գլխավոր թիմից, մարզվում է ավելի քան 400 երեխա՝ մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերից: Ընթացիկ տարում ծրագրվում է Կապանի ֆուտբոլային դպրոցին միացնել Քաջարանի, Սիսիանի, Ագարակի և Մեղրիի ֆուտբոլային դպրոցները, իսկ հետագայում նաև Գորիսինը:

Ավարտված մրցաշրջանում «Սյունիք»-ը դարձել է Հայաստանի Առաջին խմբի առաջնության փոխչեմպիոն: Ակումբը ՀՖՖ-ից ստացել էր Հայաստանի Պրեմիեր լիգայում խաղալու հնարավորություն տվող արտոնագիրը, սակայն «Սյունիք» ՖԱ որոշում է կայացրել ևս մեկ տարի հանդես գալ

ՀՊՄԿ-ն ամբողջությամբ ֆինանսավորում է «Սյունիք» ֆուտբոլային ակումբի գործունեությունը, որտեղ մարզվում է ավելի քան 400 երեխա:

Սյունիք-07-ը չորրորդ հորիզոնականը գրավեց Հայաստանի Մ17 առաջնության Ա դիվիզիոնում, իսկ թիմի 5 ֆուտբոլիստ նորամուտը նշեց ակումբի առաջին թիմի կազմում:

«Սյունիք» ՖԱ-ն ՀՖՖ-ից ստացել է Պրեմիեր լիգայում խաղալու արտոնագիր, սակայն ակումբը որոշում է կայացրել ևս մեկ տարի հանդես գալ Առաջին խմբում:

Հայաստանի Առաջին խմբում: Առաջիկա մրցաշրջանում թիմի առջև նպատակ է դրված հաղթել Առաջին խմբի առաջնությունում:

Իսկ ակումբի պատանեկան թիմերը խոստումնալից արդյունքներ են գրանցել 2023/2024թթ. պատանեկան առաջնություններում:

Ուրախալի է, որ «Սյունիք-07»-ի (մինչև 17 տարեկանների թիմ) հինգ ֆուտբոլիստ իրենց նորամուտի խաղերն են անցկացրել առաջին թիմի կազմում, իսկ «Սյունիքի» աղջիկների թիմը առաջնությունում համարվում է լավագույններից մեկը:

2023թ. «Սյունիք» ֆուտբոլային ակումբի բյուջեն կազմել է ավելի քան 493 միլիոն ՀՀ դրամ:

Անցած տարի ԶՊՄԿ-ի ֆինանսական աջակցությամբ կառուցվել են Տեղ համայնքի Տեղ և Կոռնիձոր բնակավայրերի խաղադաշտերը, նորոգվել է Կապանի «Լեռնագործ» մարզադաշտը: Ընկերությունը խրախուսում և աջակցում է նաև սիրողական թիմերի մասնակցությամբ մրցաշարերի անցկացմանը:

«Սյունիք» բար-սրճարան

«Ֆուտբոլը կյանք է, ֆուտբոլը արվեստ է». ասվածի հետ համակարծիք են «Սյունիք» բար-սրճարանի մշտական այցելուները:

Մեկ տարի առաջ Կապանում՝ Գարեգին Նժդեհի 16 հասցեում, բացված «Սյունիք» բար-սրճարանն այսօր արդեն դարձել է սպորտի սիրահարների հանդիպման ամենացանկալի վայրը: Այստեղ հատկապես ֆուտբոլային երեկոները թեժ են անցնում: Տարբեր կարծիքներ, տարբեր բնավորություններ և տարբեր ֆավորիտներ նախընտրողներ են այստեղ այցելում: Շատերին հենց այս տեսակի միջավայրն է գրավում, երբ դիտարժան խաղը վայելում են աշխույժ մթնոլորտում՝ լսում իրար հակադիր կարծիքներ, ինչու չէ՝ երբեմն էլ «կոնֆլիկտ» է առաջանում: Նրանք, ովքեր ֆուտբոլը համարում են իրենց կյանքի անբաժանելի մասը, չեն հասկանում սպորտը չսիրողներին: Օրինակ, ինչպես կարելի է չհետևել «Եվրո 2024-ի» դիտարժան խաղերը ու հաճույք չստանալ: Մեկ ամիս շարունակ ֆուտբոլային այս հրավառությունը սպորտի սիրահարները սրճարանում վայելեցին մեծ հետաքրքրությամբ. աշխարհի առաջատար ակումբների թիմերն ու ֆուտբոլային աստղերը կրկին զարմացրին թե իրենց խաղով, և թե անակնկալ պահերով: «Սյունիք» ՖԱ գլխավոր մարզիչ Արամ Ոսկանյանի կարծիքով՝ այս խաղաշրջանում լավագույնը հանդես եկան դարպասապահները. հնարավոր չէր դա չնկատել: «Սյունիք» բար-սրճարանում էսթետիկ միջավայրը, ազատ ու անկաշկանդ մթնոլորտը ապահովված են: Դե իսկ կապանյան արտադրության գարեջուրը՝ ամենապահանջվածը: Այս ամենին զուգահեռ համեղ խոհանոց ու ջերմ հյուրասիրություն, այդ թվում՝ բացօթյա տաղավարներում: Սրճարանում կողմնակից են ամրագրումներին,երբ հաճախորդները նախապես են սեղան զբաղեցնում, քանի որ որևէ այցելուի չեն ուզում հիասթափեցնել: Դե ինչ, եթե ֆուտբոլի դիտում, ապա միայն «Սյունիք» բար-սրճարան:

Պարտադիր բժշկական ապահովագրությունը և խոշոր գործատուները



Այս տարվանից մեկնարկել է առողջության համապարփակ ապահովագրության համակարգի ներդրումը: Այն կիրականացվի փուլային տարբերակով, իսկ 2027 թվականից կսկսի գործել ամբողջությամբ և պարտադիր կդառնա բոլոր քաղաքացիների համար: Կառավարության հիմնավորմամբ՝ պարտադիր ապահովագրության համակարգի ներդրումը կնպաստի ոչ միայն քաղաքացիների առողջապահական խնդիրների վաղ հայտնաբերմանը և ժամանակին անհրաժեշտ բուժօգնության տրամադրմանը, այլև կնպաստի առողջապահության ոլորտում նոր ներդրումների ներգրավմանը:

Չնայած նրան, որ պարտադիր ապահովագրությունը ուժի մեջ է մտնում այս տարվանից, Հայաստանում գործող տարբեր ընկերություններ երկար տարիներ իրենց աշխատակիցների համար առողջական ապահովագրություն են տրամադրում և բժշկական ծառայությունների լայն ծածկույթ ապահովում:

Ինչո՞ւ են ընկերությունները ինքնակամ ապահովագրում իրենց աշխատակիցներին և արդյոք նման ընկերությունների թիվն ավելանում է: «Նաիրի ինշուրանս» ընկերության անձնական ապահովագրության հայտերի դեպարտամենտի ղեկավար Աղավնի Դիլանյանի հետ զրույցից տեղեկացանք, որ վերջին տարիներին աշխատակիցների ապահովագրության կորպորատիվ փաթեթները ավելացել են, շուկան ակտիվացել է, և ընկերությունները բավականին հետաքրքրված են այս պրոդուկտով:

Նրա խոսքով, ապահովագրությունն, առաջին հերթին, ընկերությունների համար մրցակցային առավելություն է ապահովում. «**Վերջին տարիներին այսպիսի տենդենց կա, բացի աշխատավարձից՝ գործատուին դիմելիս, շատ հաճախ հարցնում են ապահովագրության մասին: Այսինքն՝ առողջության ապահովագրությունն այսօր արդեն մրցակցության մաս է կազմում: Բուժծառայությունների գներն էլ բավականին բարձր են և միայն մեկ ամբուլատոր այցը՝ խորհրդատվությամբ և հետազոտությունների փաթեթով, կարող է միջինում մինչև 60 հազար դրամ արժենալ, իսկ ապահովագրության դեպքում փաթեթի շուկայական միջին գինը կազմում է մոտ 120 հազար դրամ, որում ներառված են ատամնաբուժական, վիրահատական, ամբուլատոր ծառայություններ: Այսինքն, միանշանակ, ֆինանսական տեսանկյունից այն շահավետ է թե՛ գործատուի, թե՛ աշխատակցի համար**», – նշում է նա:

Ապահովագրական ընկերության տվյալների համաձայն՝ կան ընկերություններ, որոնք արդեն երկար տարիներ իրենց աշխատակիցներին տրամադրում են առողջապահական փաթեթ: ՏՏ ոլորտի ընկերությունները, միջազգային կազմակերպությունները և բանկերը, գրեթե, բոլորն ունեն առողջության ապահովագրություն: Ընդ որում, եթե այսօր կառավարությունը դա պարտադրելու է բոլոր գործատուներին, տարիներ առաջ նման պարտադրանք չկար:

Նման ընկերություններից է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը» (ԶՊՄԿ), որն ավելի քան 10 տարի առողջության ապահովագրություն է տրամադրում իր աշխատակիցներին և նրանց ընտանիքի անդամներին:

ԶՊՄԿ առողջապահական ծառայությունների համակարգման գրասենյակի ղեկավար Պերճուհի Պողոսյանը Banks.am-ի հետ զրույցում, խոսել է այս մոտեցման առավելությունների մասին:

> ***Կոմբինատը Հայաստանի այն եզակի գործատուներից է, որն ապահովագրում է նաև ընտանիքի անդամներին: Մեր ապահովագրության պարագայում ընտանիքի անդամ են հանդիսանում ոչ միայն կինը /ամուսինը, երեխան, այլև ծնողները, ընտանիքի ներսում ապրող քույրը և եղբայրը:***



Ապահովագրության կարևորությունը և ՀՊՄԿ փորձը

Աշխատակիցների առողջության ապահովագրությունն ընկերություններում անհրաժեշտ է այնքանով, որ գործատուն համոզված լինի՝ իր աշխատողներն առողջ են, իսկ աշխատողները վստահ լինեն, որ խնդիրների դեպքում գործատուն կհոգա առողջության ծախսերը՝ ապահովագրական ընկերությունների միջոցով: Կոմբինատը Հայաստանի այն եզակի գործատուներից է, որն ապահովագրում է նաև ընտանիքի անդամներին: Մեր ապահովագրության պարագայում ընտանիքի անդամ են հանդիսանում ոչ միայն կինը / ամուսինը, երեխան, այլև ծնողները, ընտանիքի ներսում ապրող քույրը և եղբայրը:

Ապահովագրության փաթեթը

Ապահովագրության փաթեթում ներառված է գրեթե ամեն ինչ՝ կանխարգելիչ բուժզննումից, հետազոտություններից սկսած մինչև վիրահատություններ, բացառությամբ, էսթետիկ միջամտությունները: Կարող եմ պնդել, որ մեր աշխատակիցներն իրենց և իրենց ընտանիքի անդամների առողջությանն ուղղված ծախսեր

ՀՊՄԿ-ն ունի ավելի քան **5,000** *աշխատակից,*



որոնց ընտանիքի անդամների թիվը մոտ **13,000** *է*

Նրանք մեր ապահովագրական փաթեթից օգտվելու հավասար իրավունքներ ունեն:

գրեթե չեն անում:
Առողջության ապահովագրության փաթեթը տրամադրում է պայմանագրային ծառայություններ, բայց կան այնպիսիք, որոնք ապահովագրական ընկերությունների ծածկույթից դուրս են, բացառություններ են: Դրանք արդեն ֆինանսավորում է մեր գրասենյակը՝ ՀՊՄԿ բարեգործական հիմնադրամի միջոցներով:
Մեր ընկերությունը խրախուսում է տարեկան պարտադիր բուժզննումների և կանխարգելիչ հետազոտությունների անցկացումը, որոնց դեպքում խնդիրը կարելի է հայտնաբերել նախնական փուլում, բուժել և խուսափել հետագա բարդություններից:

Սյունիքի մարզի օրինակը

ՀՊՄԿ-ն ունի ավելի քանի 5 հազար աշխատակից, որոնց ընտանիքի անդամների թիվն էլ հասնում է 12-13 հազարի: Նրանք մեր ապահովագրական փաթեթից օգտվելու հավասար իրավունքներ ունեն:
Մեր ձեռքի տակ ամբողջ բազան ունենք, թե որ աշխատակիցը և նրա ընտանիքի անդամները երբ և ինչ հետազոտություններ են անցել: 2023 թվականի ընթացքում 4583 շահառու օգտվել է ապահովագրական փաթեթից 8082 հայտի շրջանակում, իսկ ՀՊՄԿ բարեգործական հիմնադրամը ֆինանսավորել է 600 անձի բուժում՝ 3800 դեպք:
Մենք բոլոր աշխատողներին խրախուսում ենք, երբեմն էլ՝ բարեկամաբար «ստիպում» ենք, որպեսզի տարեկան կանխարգելիչ բուժզննումն անցնեն: Պետք է փաստեմ, որ մեր աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների մոտ արդեն պարտադիր հետազոտություններ անցնելու մշակույթ է ձևավորվել: Սա կարևորագույն նշանակություն ունի առողջության պահպանման համար:
Առողջապահության ազգային ինստիտուտի վիճակագրությունը փաստում է, օրինակ, որ քաղցկեղից ամենաքիչ հայտնաբերման դեպքերը 100 հազար բնակչի հաշվով գրանցվել է հանքարդյունաբերական ամենամեծ մարզում՝ Սյունիքում: Նման ցուցանիշի գրանցման հարցում մեծ ներդրում ունի նաև կորպորատիվ ապահովագրությունների փաթեթը: Քաղցկեղն այսօր, ցավոք, համատարած տարածում ունի աշխարհում, իսկ նորագոյացությունների վաղ հայտնաբերումը և հսկողությունը հիվանդության դեմ պայքարի լավագույն ձևերից է:

Արփի Ջիլավյան

Հանքարդյունաբերությունն աշխարհում



Հանքարդյունաբերության առաջատար երկրներն են Ավստրալիան, Չիլին, Չինաստանը, Ռուսաստանը, Կանադան, Բրազիլիան, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը (ԿՀԴ), Հարավային Աֆրիկան և Ամերիկայի Միացյալ Նահանգները:

Ավստրալիա

Ավստրալիան, ընդհանուր առմամբ, աշխարհում առաջատարն է հանքարդյունաբերության ոլորտում: Այն բոքսիտի, երկաթի հանքաքարի և լիթիումի ամենամեծ արտադրողն է և ածուխի, ալյումինի, պղնձի, ոսկու, մանգանի, նիկելի, արծաթի, ուրանի և ցինկի առաջատար արտադրողն է աշխարհում:
Ավստրալիան ունի հսկայական հանքային պաշարներ՝ ներառյալ շագանակագույն ածուխի, կապարի, նիկելի, ռուտիլի, տանտալի, ուրանի և ցիրկոնի աշխարհի ամենամեծ վերականգնվող պաշարները:
Խոշոր ընկերություններն են՝ BHP, Rio Tinto, Fortescue Metals, Roy Hill, OZ Minerals, South32, Newcrest և Lynas Rare Earths:

Չիլի

Չիլին աշխարհի ամենամեծ պղնձի արտադրողն է և լիթիումի կարևոր մատակարարը: Հանքարդյունաբերության ոլորտը կազմում է ՀՆԱ-ի ավելի քան 14 տոկոսը: Նրա հանքային հարստությունները ներառում են լիթիումի համաշխարհային պաշարների կեսը և պղնձի համաշխարհային պաշարների մեկ քառորդը:
Պետական Codelco ընկերությունն աշխարհի ամենամեծ պղնձի հանքարդյունաբերողն է: Մյուս հիմնական պղնձի հանքարդյունաբերողները ներառում են BHP-ի Escondida-ն, Collahausi JV, Anglo American, Antofagasta Minerals և ավելի փոքր ընկերություններ:
Լիթիումի լավագույն հանքարդյունաբերական ընկերություններն են SQM-ը և Albemarle-ը, որոնք արդյունահանում են լիթիումի կարբոնատ՝ լիթիումիոնային մարտկոցների համար:

Չինաստան

Չինաստանը ածուխի, ոսկու, անտիմոնի, մագնեզիումի, անագի, ցինկի, մանգանի և վոլֆրամի ամենամեծ արտադրողն է աշխարհում: Այն առաջատար է բարիտի, ֆտորսպին, գրաֆիտի, մոլիբդենի, ֆոսֆատային ապարների, ստրոնցիումի և կապարի պաշարներում: Պետական հսկաները գերիշխում են Չինաստանի հանքարդյունաբերության մեջ, այդ թվում՝ Shenhua Group, China Coal Energy, Aluminium Corporation of China, Jiangxi Copper, Zijin Mining, China Northern Rare Earth Group և այլ ընկերություններում:

Ռուսաստանի Դաշնություն

Ռուսաստանն ունի փայտանյութի, ոսկու, երկաթի հանքաքարի, ալյումինի, նիկելի, պղնձի, ածուխի, նավթի և բնական գազի մեծ պաշարներ: Նրա հսկայական հանքային հարստությունը ընդգրկում է 12 ժամային գոտիներ:
Ռուսաստանը Չինաստանից հետո ոսկու համաշխարհային արդյունահանման մեջ երկրորդ տեղը գրավում է Ավստրալիայի հետ մեկտեղ: Այն նաև նիկելի, պլատինի և պալադիումի առաջատար եռյակում է:



Էսկոնդիդա. պղնձի հանք, Չիլի

Հանքարդյունաբերական ընկերությունների թվում են՝ MMC Norilsk Nickel-ը, Rusal-ը, Evraz-ը, Polyus-ը, Severstal-ը, Rosatom-ը և այլն:

Կանադա

Կանադան գլոբալ լեռնահանքային հզոր կենտրոն է, որտեղ տարեկան արտադրվում են մոտ 100 միլիարդ դոլարի օգտակար հանածոներ, որոնք ներառում են ավելի քան 60 հանքանյութեր և մետաղներ:
Կանադայում առկա են ոսկու, արծաթի, նիկելի, պղնձի, կոբալտի, գրաֆիտի, լիթիումի, հազվագյուտ հողերի և այլ հարուստ հանքավայրեր:
Հիմնական ընկերություններն են Nutrien-ը, Barrick Gold-ը, Teck Resources-ը, Hudbay Minerals-ը և Cameco-ն:

Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն

ԿԺԴՀ-ն ունի կոբալտի համաշխարհային պաշարների ավելի քան 70 տոկոսը, առկա են ադամանդի հարուստ պաշարներ, պղնձի, անագի, տանտալի, վոլֆրամի և ոսկու առատ պաշարներ:
Հիմնական հանքարդյունաբերողներն են Glencore-ը, China Molybdenum-ը, որը վերահսկում է հսկա Tenke Fungurume համալիրը, Chemaf-ը, որը հիմնականում արտադրում է կոբալտ և պղինձ, բելգիական Umicore հանքագործը և այլն:

Բրազիլիա

Բրազիլիան ունի աշխարհի ամենամեծ նիոբիումի, երրորդ՝ բոքսիտի և երրորդը՝ երկաթի հանքաքարի պաշարները: Այն նաև ոսկու, անագի, լիթիումի, նիկելի, թանկարժեք քարերի և այլ հանքանյութերի առաջատար արտադրողն է:
Vale-ը երկրի խոշորագույն հանքափորն է, որը համաշխարհային ճանաչում ունի իր Carajás երկաթի հանքաքարի համալիրով: Աչքի են ընկնում նաև անգլո-ամերիկյան Belo Sun-ը և Sigma Lithium-ը:

ԱՄՆ

ԱՄՆ-ն ունի հանքային տարբեր պաշարներ և հանդիսանում է պղնձի, ոսկու, մոլիբդենի, ֆոսֆատային ապարների, հազվագյուտ հողերի, աղի, սոդայի մոխրի, ցեոլիտների և ցինկի համաշխարհային առաջատար արտադրողը:
ԱՄՆ-ի առաջատար հանքարդյունաբերական նահանգներն են Արիզոնան, Նևադան, Այլասկան և Մոնտանան:
Ամերիկյան հայտնի հանքարդյունաբերական ընկերություններից են Freeport McMoRan-ը, Newmont-ը, Barrick USA-ը, Southern Copper-ը և Albemarle-ը:

Անվտանգ աշխատանքը փրկում է կյանքեր

Դուք գիտեի՞ք, որ անհատական պաշտպանիչ միջոցներ (ԱՊՄ) կրելու պարտադիր պահանջը աշխարհում ծագել է երկարամյա վիճակագրությունից, որն ապացուցում է, որ դրանցից յուրաքանչյուրն ամեն տարի փրկում է հազարավոր մարդկանց կյանքեր:

ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ // Ամբողջ աշխարհում արդյունաբերությունում աշխատող մարդկանց շուրջ 12%-ը լսողության խնդիրներ ունի, 8%-ը՝ ականջի խշշոց, 13%-ը՝ երկու ականջների լսողական խնդիր, քանի որ կեսից ավելին չի կրում լսողության պաշտպանության միջոցներ:

ԱՄՐԱԳՈՏԻ // Վիճակագրության համաձայն՝ ամրագոտի կրելու պարզ գործողությունը ավտոմոբիլային վթարների ժամանակ կարող է կանխել մահվան ելքերի 50 %-ը:

ՁԵՌՔԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ // Հատուկ պաշտպանիչ ձեռնոցներ պետք է կրեն էլեկտրականության հետ աշխատող մարդիկ, եռակցողները, գազաեռակցողները, քիմիկատների և թունաքիմիկատների հետ աշխատողները:

ՍԱՂԱՎԱՐՏ // Պատահարների և վնասվածքների մասին հարցումը, որն իրականացրել է Աշխատանքի միջազգային կազմակերպությունը, ցույց է տվել, որ հարվածից գլխի լուրջ վնասվածքներ ստացած աշխատակիցների 84%-ը սաղավարտ չի կրել:

ԱՉՔԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ // Օրական ավելի քան 2000 աշխատակից ամբողջ աշխարհում ստանում է աչքի վնասվածք: Պահանջվող վայրերում պաշտպանական ճիշտ ակնոց դնելը պատահարի ժամանակ նվազեցնում է վնասվածք ստանալու ռիսկը:

ԺԻԼԵՏ (ԼՈՒՅՍԱՆԴՐԱԴԱՐՁԻՉ ԱՐՏԱՀԱԳՈՒՍՏ) // Վիճակագրության համաձայն՝ աշխատավայրում պատահարների մոտ 15%–ը պայմանավորված է լինում տեսանելիության խնդրով: Անդրադարձնող արտահագուստը օգնում է լուծել այդ խնդիրը:

ՊԱՇՏՊԱՆԻՉ ԿՈՇԻԿՆԵՐ // Պատահարների 25%-ը հնարավոր է կանխել՝ համապատասխան պաշտպանիչ կոշիկներ կրելու դեպքում: